ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/4.3.2-3-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. ապրիլի 28-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին՝

Հանձնաժողովին ներկայացվեց, որ **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 2 (երկու) հայտ՝

- «Գլոբալ Ավիատուր 18» ՍՊԸ-ի,
- «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Գլոբալ Ավիատուր 18» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում մրցույթի հրավերի պահանջներին:

Մասնավորապես՝

- «Armeps» համակարգի Պիտանելիության չափորոշիչ բաժնում կցված չէ ծրագրի առաջարկը, որը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին, նպատակներին և առաջնահերթություններին՝ համաձայն՝ հավելված N 3-ի:
- Ներկայացված փորձը չի համապատասխանում Հրավերի 2.3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջին՝ արկածային զբոսաշրջության ոլորտի ղեկավարների, մասնագետների և/կամ աշխատակիցների համար նախատեսված կրթական ծրագրերի, դասընթացների և/կամ վերապատրաստումների իրականացման 2 տարվա գործունեություն:

Հրավերի 2.4-րդ կետի՝

- 4-րդ ենթակետին համապատասխան ներկայացված նախկին փորձը հավաստող պայմանագրերը (ներառյալ հանձման, ընդունման ակտերը), և/կամ տեղեկանքները, և/կամ այլ փաստաթղթերը չեն համապատասխանում Հրավերի 2.3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջին,
- 5-րդ ենթակետով նախատեսված դասընթացի մանրամասն նկարագիրը և կատարվող աշխատանքների ժամանակացույցը չեն համապատասխանում 2.4.1 կետի պահանջներին (ներկայացված ծրագրի բովանդակությունը չի վերաբերում արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար դասընթացին):

Մեկի՝

- **«ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին, սակայն Կազմակերպությունը հաղթող կճանաչվի և նրա հետ պայմանագիր կկնքվի, եթե՝

- Հրավերի 2.3-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ներկայացված արկածային զբոսաշրջության ոլորտի ղեկավարների, մասնագետների և/կամ աշխատակիցների համար նախատեսված կրթական ծրագրերի, դասընթացների և/կամ վերապատրաստումների իրականացման 2 տարվա գործունեությունը հավաստող պայմանագրերի, տեղեկանքների կամ այլ փաստաթղթերի հետ լրացուցիչ կտրամադրի նաև այնպիսի պայմանագրեր կամ փաստաթղթեր, որոնցով հստակ երևում է, որ տվյալ կազմակերպությունը՝ որպես կատարող կամ կազմակերպիչ կամ իրականացնող հանդես է

եկել ներկայացված փաստաթղթերում սահմանված կրթական ծրագրերի իրականացման գործընթացում:

Օրինակ՝ կարող են ներկայացվել

- Պայմանագրերի պատճեններ՝ կնքված «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ և դասընթացի մասնակիցների կամ դասընթացի մասնակիցների գործատուների միջև,
- Հավաստագրերի պատճեններ, որ տրամադրվել են դասընթացի մասնակիցներին «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ կողմից,
- ցանկացած փաստաթուղթ, որը լրացուցիչ կապացուցի, որ «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊ ընկերությունը իրականացրել է դասընթացների կազմակերպչական աշխատանքները:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպության՝

- **«Գլոբալ Ավիատուր 18» ՍՊԸ-ի**

կողմից ներկայացված հայտը:

2. Առաջարկել Ծրագրի հավելված 2-ի 4.3 կետով նախատեսված «Զբոսաշրջության կրթության բարելավում» միջոցառման **«Զբոսաշրջության կրթության բարելավում. արկածային զբոսաշրջություն իրականացնողների համար (դասընթաց(ներ))»** 4.3.2 ենթամիջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 1 (մեկ) կազմակերպությանը՝

- **«ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ-ին՝**

- Հրավերի 2.3-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան ներկայացված արկածային զբոսաշրջության ոլորտի ղեկավարների, մասնագետների և/կամ աշխատակիցների համար նախատեսված կրթական ծրագրերի, դասընթացների և/կամ վերապատրաստումների իրականացման 2 տարվա գործունեությունը հավաստող պայմանագրերի, տեղեկանքների կամ այլ փաստաթղթերի հետ լրացուցիչ տրամադրել նաև այնպիսի պայմանագրեր կամ փաստաթղթեր, որոնցով հստակ երևում է, որ տվյալ կազմակերպությունը՝ որպես կատարող կամ կազմակերպիչ կամ իրականացնող հանդես է եկել ներկայացված փաստաթղթերում սահմանված կրթական ծրագրերի իրականացման գործընթացում:

Օրինակ՝ կարող են ներկայացվել

- Պայմանագրերի պատճեններ՝ կնքված «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ և դասընթացի մասնակիցների կամ դասընթացի մասնակիցների գործատուների միջև,
- Հավաստագրերի պատճեններ, որ տրամադրվել են դասընթացի մասնակիցներին «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊԸ կողմից,
- ցանկացած փաստաթուղթ, որը լրացուցիչ կապացուցի, որ «ԱԼՏԵՐԷԳՈ» ՍՊ ընկերությունը իրականացրել է դասընթացների կազմակերպչական աշխատանքները:

Մրցութային հանձնաժողովի առաջարկը ընդունելու և պահանջվող փաստաթղթերը **մինչև 2025 թվականի մայիսի 7-ը** ներկայացնելու դեպքում կազմակերպությունը հաղթող կճանաչվի և նրա հետ կկնքվի համապատասխան դրամաշնորհային պայմանագիր:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Հ.Սահակյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____